HETQ.am-ի լրագրող Տիրայր Մուրադյանին

Հարգելի՛ պարոն Մուրադյան

Մեծ հարգանք ունենալով Ձեր անձի և լրատվական կազմակերպության նկատմաբ՝ այնուամենայնիվ կարծում եմ, որ մինչ «կեղծիքներ՝ հանուն ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի» հոդվածի հրապարակումը, ճիշտ կլիներ իրականացնել համապատասխան հարցումը, այլ ոչ թե հակառակը: Միևնույն ժամանակ կարծում եմ ինստիտուցիոնալ առումով հարցումը պետք է հղվեր Երևանի քաղաքապետարան և այնտեղից ստանալ համապատասխան տեղեկատվություն՝ թե ինչպես է Երևանի քաղաքապետարանը տրամադրել համապատասխան շինարարական թույլտվությունը, քանի որ Հրաչյա Սարգսյանը այն տրամադրել է որպես Երևանի քաղաքապետ, այլ ոչ թե ֆիզիկական անձ: Այնուամենայնիվ ուսունասիրելով Ձեր կողմից ուղարկված փաստաթղթերը և մտաբերելով այդ գործի որոշ մանրամասններ տեղեկացնում եմ, որ տվյալ տարածքում նախնական շինարարության համար քննարկումները քաղաքապետարանի հետ սկսված են եղել դեռ 2008 թ-ից: Համաձան Ձեր կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ տվյալ տարածքում, շինություն նախագծելու համար տրամադրված է եղել ներքոնշյալ նախագծման հետևյալ թույլատվությունները.

2019թ.

1. Կառույցը նախագծել 3 ստորգետնյա, շենքի հիմնական ծավալի համար մինչև 11 (43.5 նիշ) վերգետնյա հարկերով՝ 12-րդ հարկը մասնակի ծավալով տեխնիկական հարկ, **իսկ ետ ընկած գլանաձև ծավալի բարձրությունը նախագծել հաշվի առնելով հարակից շենքերի հետ համահունչ ընկալման պայմանից ելնելով:**
2. Աբովյան փողոցի կառուցապատման գծով նախատեսվող հատվածը նախագծել մինչև 4 հարկ, որից հետո այն շարունակել ետնահանջով:

2022թ.

1. Կառույցը նախագծել 3 ստորգետնյա և շենքի հիմնական ծավալի համար մինչև 48,0 մ, **իսկ ետ ընկած գլանաձև ծավալի բարձրությունը՝ մինչև 71,0մ:**
2. Աբովյան փողոցի կառուցապատման գծով նախատեսվող հատվածը նախագծել մինչև 4 հարկ, որից հետո այն շարունակել նահանջով:

Ինչպես երևում է քաղաքապետարանի կողմից 2019թ.-ին տրամադրված նախագծման թույլտվության համար հիմք է հանդիսացել 19.12.2017թ **h 01/18-8069-1266 շինարարական թույլտվությունը**, որտեղ իսկ, արդեն գլանաձև կառույցի **առավելագույն նիշ է եղել սահմանված 71,0 մ**: Որից հետո կառուցապատողի կողմից՝ չսպասելով համապատասխան ընթացակարգերով շինարարական թույլտվության ստացումը, իրականացվել է հաստատման ենթակա նախագծով շինարարություն, որը օրենսդրության տեսանկյունից դիտարկվել է որպես ինքնակամ կառույցի կառուցում և շինարարությունը դադարեցվել է: Քաղաքապետի 3031-Ա 19.08.2022թ. որոշմամբ կառուցված շինությունը օրինականացվել է և տրամադրվել է նոր նախագծման թույլտվություն, որտեղ արդեն հստակ արձանագրվել է գլանաձև ծավալի բարձրությունը: Ըստ էության շինությունը բաղկացած է 2 մասից՝ հիմնական, որի մի մասը հետ ընկած է և գլանաձև մասից, որի բարձրության նիշը մինչ 2022թ-ը նախագծման թույլտվության տրամադրումը եղել է հաստատված:

Ինչ վերաբերվում է Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ համաձայնեցման, ապա վերոգրյալից պարզ է դառնում, որ ըստ էության 2021թ-ի նախագիծը չի փոփոխվել և բացի այդ վստահ եմ, որ 2022թ-ի շինարարական թույլտվության հիմք հանդիասացող նախագծի բոլոր էջերին առկա է վերոնշյալ մարմնի կնիքը:

Ձեր հրապարակած էլեկտրոնային հոդվածում անրադարձել էիք նաև քաղաքում 9-ից բարձր հարկերի շինությունների առկայությանը՝ ճիշտ է, ես չեմ հանդիսանում այդ ոլորտում մասնագետ, բայց կարծում եմ, որ այդ խնդիրները ժամանակակից աշխարհում չեն լուծվում միայն համապատասխան երկարության աշտարակների առկայությամբ, այլ կարող են իրականացվել այլ տեխնիկական

միջոցառումների իրականացմամբ: Օրինակ՝ Նյու Յորքում կամ ԱՄԷ-ում առկա բարձրահարկ շենքների համար չեմ կարծում որ առկա են համապատասխան բարձության աշտարակներ և կարծում եմ հարցը պետք է ուսումնասիրել նաև այս տեսանկյունից:

Վերոնշյալ տեղեկատվությունը շարադրեցի Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերի և մտաբերելով որոշ տեղեկատվություն: Հուսով եմ հետագայում նմանատիպ հրապարակումներ իրականացնելիս նախօրոք կիրականացնեք համապատասխան հարցումները: Իմ պաշտոնավարման ընթացքում ես առաջնորդվել եմ օրենքի շրջանակներում՝ ի շահ համայնքի և բնակիչների: Ընդհանուր առմամբ քաղաքում կան խնդիրներ, որոնց հետ առերեսվել եմ որպես փաստ և որպես պաշտոնյա՝ գնահատելով առկա իրողությունները, կայացրել եմ որոշումներ, որոնք շատ դեպքերում չեն եղել իմ երազանքների որոշումները:

Հարգանքով՝

Հր.Սարգսյան